



# Ա Բ Ա Բ Ա Տ

ԹԻՒ Ե. — ՇՐՋԱՆ ԻԳ. 1891 ՏԱՐԻ ԻԴ. ՄԱՅԻՍ

## ԿՐՈՆԱԿԱՆ

### ՃԱՆԱՉՈՒՄՆ ՀԱԳԻՈՎ.

Այսուհետև մեք ոչ զոք գիտեմք մարմնով:  
զի թէպէտ և գիտէաք մարմնով զՔրիստոս  
այլ արդ ոչ ևս նոյնպէս գիտեմք (Երկր.  
Կորնթ. Ե. 16):

Եղբարք, մեր խորհրդածութեան և խօսակցութեան առարկայ  
ընտրում եմ Ս. Պողոս առաքեալի վերոյիշեալ խօսքերը. գուցէ նո-  
քա ձեզ զարմացնում են, ինչպէս ինձ էլ զարմացրել են, մինչեւ որ

ևս նոցա իսկական միտքը չէի ըմբռնած: Խոստովանում եմ, որ այս խօսքերն ինձ շատ էին վշտացնում երբէմն — ասեմ. նոքա ինձ չոր ու ցամաք հոգեպաշտութեան արտայայտիչք էին թուում:

Ինչպէս, մտածում էի ես, ահա առաքեալներից մէկը չէ կամենում գիտենալ — ճանաչել Քրիստոսին ըստ մարմնոյ: Միթէ այս չէ նշանակում մոռանալ, որ Փրկիչը մարդ էր: Միթէ այս չէ նշանակում աննշան բան համարել համակրութեան այն քնքոյշ և խորին զգացմունքն, որ մեզ ազդում է Մարդու Որդին: Միթէ հարկ է մոռանալ նորա մարմնոյ թուլութիւնը, նորա չարչարանքները, այն ամենն, ինչ որ շատ գրաւում է մեզ, որ շարժում է մեր սիրում և մեզ միսիթարում է: Միթէ պէտք է զննենք ու տեսնենք Քրիստոսին միայն փառաց մէջ Հօր մօտ, իւր բոլոր կատարելութեան մէջ, երկնային փայլի մէջ, որ մեզ աւելի շլացնում է քան գրաւում:

Ահա ինչ էի ինքս ինձ ասում ցաւօք սրտի և անկարող գոլով Ա. առաքեալի հոգւոյ բարձը թոփչքին հետևելու, սիրով վերադառնում էի դէպի Մարիամի բարեկամն, որ լալիս է Վազարոսի գերեզմանի վերայ, դէպի վշտի մարդն, որ իւր երկրաւոր կեանքի օրերում կրում էր մեր աղքատ մարդկութեան թուլութիւններն ու տկարութիւնը:

Բայց ի վերջոյ լոյսն արաւ իւր ներգործութիւնն. ես հասկացայ, որ Ա. Պօղոսը չէ կամեցել ոչինչ բառնալ Փրկչի մարդկային բնութիւնից և որ այն խօսքերն, որոնք ինձ վերայ այնպիսի վշտացուցիչ տպաւորութիւն գործել էին, իսկապէս լի են միսիթարական խրատներով: Դուք էլ, եղբարք, կխոստովանիք այն, եթէ կթափանցէք նոցա իսկական միտքը:

Վերոյիշեալ խօսքերն հասկանալու համար յիշենք Ա. Առաքեալի թղթի ընտիր գլխի բովանդակութիւնն, որից նոքա հանած են: Պօղոս առաքելոյ թղթերից ամենից աւելի երեսում է նորա սրտի հարստութիւնն այն թղթերում, որոնք ուղղած են Կորնթացւոց, իսկ գլուխն, որ բովանդակում է իւր մէջ մեր ընտրած բնաբանը, ցոյց է տալիս, թէ ուր է աղբիւրն այս սիրոյ, որոյ հետևանքն է այնպիսի անձնութացութեամբ լի կեանքն, այնպիսի զօրեղ առաքելական գործունեութիւնն, որպիսին միայն երբեկցէ տեսել է եկեղեցին իւր մէջ,

Քրիստոսի սիրով գեղուն է Ս. Պօղոսի սիրտը — և այս պատճառով էլ նա — մի օտարական — դալիս է Կորնթացւոց մօտ և նուիրում է նրանց իւր ժամանակն, իւր սիրտն ու իւր կեանքը։ Այսպէս Ս. առաքեալն ասումէ, որ նորա սէրն առ Կորնթացիս չէ աղբերանում որևէ է մարմնաւոր, ինքնասէր դրդումից, որովհետեւ նա իւր յարաբերութեանց մէջ մարդոց հետ բնաւ հաշուի չէ առնում ոչինչ երկրաւոր կամ անցաւոր, նորա համար կշիռ չունի, թէ ում է նա ուղղում իւր խօսքերը, հարստին թէ աղքատին, գիտնականին թէ տգէտին, եբրայեցուն թէ հեթանոսին — նորա համար նշանակութիւն ունին մարդոց հոգիք, որոնք կարօտ են փրկութեան։ Նա կարող էր, նորա գործունէութեան և կոչման խոշընդուռ եղող սուտ վարդապետների նման, իրան գովաբանել նրանով, որ ինքը ճանաչում էր Յիսուս Քրիստոսին Երուսաղեմում, որ նա հայրենակից է նրան ըստ ծագման. բայց Ս. առաքեալի համար նշանաւորն այս չէ, նա գիտէ, ճանաչում է Քրիստոսին ըստ հոգւոյ, այսինքն իւր Փրկչին և Կորնթացւոց Փրկչին, ահա նորա համար ինչ է էականն և հէնց այսպիսի ճանաչողութիւն էլ ցանկանում է ինքը Քրիստոս։ Եղբարք, հանենք այս մոքից առաջին խրատը։

Մեզնից ո՞վ չէ նախանձել հրէաններին, որոնք առաւելութիւն ունեցան իրանց մէջ Յիսուսին տեսնելու նորա մարմնաւոր կեանքի ժամանակ։ Մեզնից ո՞վ չէ նախանձել նորա աշակերտներին, որոնք բաղդ ունեցան նրան լսելու, — ո՞վ չէ նախանձել Մարիամին և Դավարոսին, որոնք նրան ընդունեցին իրանց յարկի տակ։ Մեզ թուում է, թէ մեր սիրտն աւելի ուժով զգածուած կլինէր, եթէ մենք նրան լսած կլինէինք մեր ականջով, թէ նորա հայեացքը կիսազաղացնէր մեր հոգին, թէ մինչեւ անգամ նորա ձայնը մեզ վերայ անջնջելի տպաւորութիւն կգործէր։ Մեզ թուում է, թէ մեր մէջ երկրայութեան ստուերն անդամ չէր մնալ, եթէ մենք վկայ լինէինք նորա հրաշքներին, մեզ թուում է, որ եթէ մենք նրան տեսնէինք իսաչի վերայ, մեր մեղմացած, շարժուած, ճնշուած սիրտը բոլորովին և ընդ միշտ նրան կպատկանէր։

Եղբարք. ո՞ կարող է ասել, որ այս ամենն իրօք կպատահէր մեզ։ Ովհ գիտէ, արդեօք մեր հաւատն աւելի զօրեղ կլինէր, եթէ մենք

Յիսուսին տեսնելիք: Լսեցէք, թէ ինչ է ասում Տէրն այս մասին: Նրան տեսնելիս մի կին աղաղակում է «Երանելի է Քեզ ծնողը»: Նա պատասխանում է. «Նա՝ երանի այնոցիկ է, որ լսեն զբանն Աստուծոյ և առնեն. (Ղուկ. ԺԱ. 28): Մի մարդ անցնելով ամբոխի միջով մօտենում և ասում է Յիսուսին «Ահա քո մայրդ և եղբայրներդ դուրսը կանգնած են և կամենում են խօսել Քեզ Հետ»: Նա պատասխանում է. Ո՞վ է իմ մայրս և ո՞յք եղբարքս, ով կկատարէ իմ երկնաւոր Հօրս կամքը, նա է իմ եղբայրս, քոյրս և մայրս» (Մատթ. ԺԲ. 47, 48, 50): Խորհրդաւոր ընթրքի երեկոյեան իւր մերձաւոր մահուան առթիւ տրտմած առաքեալներին ասաց. «Լաւ է ձեզ, եթէ ես երթամ», (Յովհ. ԺԶ. 7): Աշակերտներն, որոնք Նրան հանդիպեցան կմմաւուսի ճանապարհին, ասում են «առ մեզ ագիր, զի ընդ երեկս է, և տարաժամեալ է օրս». բայց «Նա եղեւ աներեսոյթ (Ղուկ. ԽՊ. 31): Մարիամ Մադդաղինացին պարտիզում հանդիպում է Նրան և կամենում է մերձենալ Նրան, բայց Յիսուս ասում է Նրան. «Մի մերձենար յիս, զի չես ևս ելեալ եմ առ Հայրիմ» (Յովհ. Խ. 17):

Ի՞նչ կարող է այս ամենը նշանակել, ինչ միտք է պահուում այս խօսքերի մէջ, բայց եթէ այն, որ Յիսուս Քրիստոս կամենում է, որ Նրան ճանաչեն հոգւով և հաւատով :

Իրաւ է, երբեմն առաքեալները նայում էին Նրան մարմնաւոր աչքերով, նոքա տեսնում էին Նորա հրաշքներն և յափշտակուում էին Նրանցմով, . նոքա տեսան, թէ ինչպէս Նա մի խօսքով խաղաղցրեց ալեկոծուած ծովը, ինչպէս հացը բազմանում էր Նորա ձեռքում և յագեցնում հազարաւոր մարդոց, ինչպէս Նորա խօսքով Դազարոսը գերեզմանից դուրս եկաւ — բայց . . . Մէծ էր արդեօք նոցա հաւատոր, շատ բանի էին արդեօք հաւատում. այնքան սակաւ, որ հերիք էին նոցա Վարդապետի թշնամեաց ըոպէական յաղթանակն և Նորա ստորացումն, որպէս զի նոքա երկչոտութեամբ ցրուէին և ուրանային Քրիստոսին մինչև անդամ մի խեղճ աղախնի առաջ:

Բայց ինչու մինչև ցայժմ այդ երկշոտ և դողացող մարդիկ Պենտեկոստէի օրից սկսած հանդէս են գալիս հասարակական գործու-

նէութեան ասպարէզը: Ինչու Գալիլիայի ձկնօրսները այն ժամանակից յետոյ չեն երկնչում վիճաբանելու Երուսաղէմի ճարտար իմաստունների հետ, ինչու նոքա յաղթում են նրանց, ինչու նոքա աշտեաններում դողացնում են Փեստոսներին ու Ագրիպասներին, ինչու նոքա արհամարհում են նեղութիւններն և անարդանաց ու չարչարանաց մէջ նոցա երեսները լուսաւոր են և ուրախ: Որովհետեւ նոքա միայնակ չեն, նոցա հետ է Յիսուս Քրիստոս, յայտնուած Հոգով Սրբով: Ոչ, երբ նոքա տեսան Յիսուս Քրիստոսին իրանց աչքերով և շօշափեցին իրանց ձեռքերով, նա նրանց այնպէս մօտիկ չէր, ինչպէս այն ժամանակ, երբ նոքա սկսան նրան տեսնել հոգեոր աչքերով, երբ նոքա նրան ճանաչեցին հոգւով:

Իրաւ է, երբեմն առաքեալները հետևում էին Քրիստոսին նորա երկրաւոր ճանապարհորդութեան ժամանակ և լսում էին նրան մարմնաւոր ականջներով. ո՛հ որպիսի անփոխարինելի առաւելութիւն է: Որպիսի խօսքեր լսում էին, որպիսի տպաւորութիւն գործում էր նոցա հոգու վերայ խօսակցութիւնը նորա հետ. Որքան աստուածային ճշմարտութիւնք պարզուում էին նոցա այն պարզ առակներով, որոնք բացատրում էր նոցա Վարդապետը: Ինչպիսի ուժով ազդում էր նոցա վերայ նորա խօսքի յաղթող իշխանութիւնը, խօսքի, որ կարծես երկնկից էր իջնում նոցա հոգու վերայ և որ կրում էր աստուածային ծագման կնիք: Բայց և այնպէս յիշեցէք, թէ որպիսի հարցեր էին տալիս նոքա Վարդապետին: Սորա հրաշալի բացատրութիւններից յետոյ՝ որպիսի թուլութիւն հաւատոյ մէջ, որպիսի նախապաշարմունքներ, որպիսի մարմնաւոր և կոպիտ դատողութիւնք արտայայտուում էին, ինչպէս վատ էին հասկանում նոքա, ինչ որ ուսուցանում էր նրանց Յիսուս և ինչպէս շուտով մոռանում էին նորա խօսքերը:

Ինչու ապագայումն ամեն ինչ բացայայտուում է առաքեալների համար և փոխանակ հաւատի մէջ տատանուող աշակերտների տեսնում ենք այնպիսի ուսուցիչների, որոց ոտների մօտ նստած են Սաւղոսներն ու Ապողոսներն ինչպէս հլու աշակերտներ: Ինչու Քրիստոսի խօսքերն յանկարծ ակնյայտնի կերպով պարզուում են նոցա համար և նրանց հետևում են ազահութեամբ լսող խուռն

բազմութիւնք։ Խնչու այդ Գալիլիացիք, որոնց կոպիտ նախապաշարմունքները ժպիտ էին յարուցանում մեր երեսների վերայ, իւրեանց թղթերի և խորհրդածութեանց մէջ բացատրում են իրանց Ա.արդապետի մոքերն այնպիսի խորին գիտութեամբ և շնորհալի հանձարով, որ մինչև ցայծմ էլ եկեղեցին խոնարհում է նոցա առաջ և նոցա երկերից, իբրև կեանքի ու սրբութեան անհատչիլի աղբիւրից, ջուր է հանում։ Խնչումն է այս ամենի պատճառն ու գաղտնիքը։ Նրանումն է, որ Յիսուս Քրիստոս նոցա հետ է, որ կատարուեցան նորա վերջին խօսակցութեանց մէկի ժամանակ ասած խօսքերը։ «Աւ է ձեզ. եթէ ես երթամ (Յով. ԺԶ. 7): Եղաբարք, նորա երթալից կախուած էր Հոգւոյն Սրբոյ իջումն առաքեալների վերայ։ «Եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս, մինչև ի կատարած աշխարհի (Մատ. ԽԸ. 20):

Նկատեցէք, եղբարք, որ սորա մէջ է արտայայտուում քրիստոնէութեան բնորոշ առանձնայատկութիւնն, իբրև կրօնի։ Ա. Ա. Պաւանութիւնք այսպիսի ինչ չունէին։ Նոքա կազմում էին դաւաբանութիւն և ծեսէր, առելով։ «Պահպանեցէք այս ամենն և դուք երկնքին կարժանանաք, նոքա ունէին իրանց Բուգդաներին և Մէհմէտներին, որոնք իրանց իբրև Աստուծոյ կամքի արտայայտիչներ ու մեկնիչներ էին ներկայացնում — բայց միայն Քրիստոս հետամուտ եղաւ այս բարոյական հրաշքին — այն է յափտեանս ներկայ լինելու իւր հետեղների հոգւոյ մէջ — և հասաւ այդ նպատակին։

Քրիստոնէութեան այս բնորոշ գիծը զարմացըեց մեր դարի ամենանշանաւոր հանձարներից մէկին, այն է նապոլէոնին, որ արդէն աքսորուած լինելով Ա. Հեղինէի կղզու վերայ, նա այսպէս համեմատում էր իւր թագաւորութիւնը Յիսուսի Քրիստոսի թագաւորութեան հետ։ «Ես յափշտակում էի ամբոխին, որ մեռանում էր ինձ համար, բայց սորա համար անհրաժեշտ էր իմ ներկայութիւնս, իմ հայեացքս, իմ խօսքս կամ իմ ձայնս — և այն ժամանակ բորբոքուում էր սրտերում սուրբ կրակը։ իսկ Քրիստոս, միայն Քրիստոս հասաւ նրան, որ անտեսանելի կերպով յափշտակում էր սրբաբերը, ի չիք դարձուցանելով ժամանակի և տարածութեան ազդեցութիւնը։ Զնայելով 18 դարերի անջրպետութեան — հեռաւորու-

թեան, նա պահանջում է մարդկերանցից այն, ինչ որ նոքա սովորաբար դժուարութեամբ են տալիս, ինչ որ գիտնականը ի զուր խընդրում է—իւր բարեկամներից, հայրը—իւր զաւակներից, մարդկանոջից, եղբայրը եղբայրից—այսինքն անկեղծ սէր։ Նա պահանջում է անպայման իշխանութիւն մարդուս սրտի վերայ և հասնում է նրան։ Որպիսի՞ հրաշք է։ Զնայելով ժամանակին և հեռաւորութեան մարդկային հոգին իւր բոլոր ընդունակութիւններով մերձենում է և կացում Քրիստոսին և բոլոր անկեղծութեամբ նրան հաւատացողները զգում են այս անպայման, գերբնական սէրը դէպի նա։ Այս սրբազն կրակն, որոյ զօրութիւնն և հաստատութիւնը չէ կարողանում թուլացնել և սահմանափակել մինչև անգամ ամենամեծ աւերիչն ու խորտակիչը՝ ժամանակը, անբացատրելի և մարդկային ուժի համար անհնարին երեսյթ է։ Ես նապոլէոնս, յաճախ մտածում էի սորա վերայ, և հենց այս անպայման կերպով ապացուցանում է Յիսուսի Քրիստոսի Աստուածութիւնը։

Ո՛հ եղբարք, դուք կցանկայիք տեսնել Յիսուս Քրիստոսին, դուք նախանձում եք նորա աշակերտաց առաւելութեան, դուք ասում եք՝ «Երանի այն առաքեալին, որ իւր գլուխը նորա կրծքին թեքեց, երանի Սամարացի կնոջ, որ նորա համար ջուր հանեց ջըհորից, երանի Սիմեօն Կիւրենացուն, որ նորա խաչը բարձաւ։ Ես հասկանում եմ ձեզ, եղբարք, ես ինքս էլ յաճախ կրկնել եմ նոյնն, ինչ որ դուք եք ասում, բայց . . . Հաւաստի՞ եք արդեօք, որ նրան տեսնելով դուք նրան կհաւատայիք, հաւաստի՞ եք արդեօք, որ նորա հեղութիւնն, աղքատութիւնն ու հասարակական խոնարհ վիճակը ձեզ նրանից չեին հեռացնիլ։ Հուաստի՞ եք արդեօք, որ չէիք ամաչիլ նրան խոստովանելու, որով դուք պէստի է ի շարս Գալիլիացիների, մաքսաւորների և յանցաւորների դասուէիք, այնինչ Սադուկեցիք, դպիրներն և այն ժամանակուայ զօրեղ հանճարները ծաղրում էին նորա արտաքին դիրքը։ Հաւաստի՞ եք արդեօք, որ ձեր սիրտը չէր խոռվիլ, լսելով անէծքներն ու նզովներն, որոնք Հաստատուում էին հնգետասանդարեայ աւանդութեամբ և Մովսէսի յարգելի հեղինակութեամբ։ Հաւաստի՞ եք, արդեօք, որ դուք

Երկրայութեան և երկմտութեան մէջ չէիք ընկնիլ, տեսնելով Յիսուսին անապաստան, անարգուած և անպատուած. և վերջապէս մահուան աղքատութեամբ ծածկուած խաչի վերայ: Եղբարք, դուք Նորա աշակերտներից բարձր չէք. ձեր եռանդը Պետրոսների եռանդից աւելի չէ, ձեր արիութիւնը Յովհաննիսի արիութիւնից աւելի չէ: Դուք ինչ կանէիք, եթէ դուք Քրիստոսին գիտենայիք, ճանաչէիք ըստ մարմնոյ. Ո՞վ գիտէ, գուցէ դուք Նրան բարձի թողի անէիք. ո՞վ գիտէ, թէ դուք Նրան չէիք ուրանալ, դուք որ այժմա էլ, քրիստոնէութեան տասնեռութը դարերից յետ, խաչի յաղթանակից յետոյ էլ աշխարհիս վերայ և նոյն խակ ձեր հոգւոյ վերայ, յաճախ գուցէ Երկմտած էք Յիսուսի մասին կամ ուրացած Նրան:

Բայց և այնպէս ես կընդունեմ, որ դուք հաւատարիմ կմնայիք Նրան. բայց կհասկանայիք արդեօք այն գործն, որոյ համար Նա եկաւ: Արդեօք չէիք կապուիլ աւելի Նորա Երկրաւոր անձնաւորութեան հետ, քան Նորա Աստուածային գործի հետ, կսիրէիք արդեօք Նրան հոգւով, ինչպէս Նա կամենում է սիրուած լինել: Արդեօք չէիք զգալ դէպի ի Նա իսկ այն Երկրաւոր համակրութիւնն, որոյ համար Նա խիստ յանդիմանեց Պետրոսին, Երբ վերջինս կամենում էր Նրան շեղել Նորա փշալից ճանապարհից և խաչի մահից և կամ որոյ համար Նա յանդիմանեց Մարթային որ չընտրեց բարի բաժինը: Ո՞ւ Եղբարք, հաւատացէք Յիսուս Քրիստոսին, որ ասաց առոքեալներին, «Լաւ է ձեզ, եթէ ես Երթամ»: Այսպէս պիտի լինէր, որպէս զի Նորա աշակերտների սէրը դառնար այնպիսի, որպիսի պէտք է լինէր, որպէս զի Նա դադարէր սողալու Երկրիս Երեսին, այլ զօրեղ թռիչքով ձգտէր դէպի բարձր և Մարդու Որդու մէջ ճանաչէր Աստուծոյ Որդուն: Այսպէս պէտք է լինէր, որպէս զի Նորա աշակերտները վերածնէին հոգւով, գիտենային հաւատալ յաւիտենական անտեսանելի իրականութեան, որպէս զի նոքա իրանց Վարդապետի թագաւորութիւնը չորսնէին Երուսաղէմում, թագաւոր — Մեսիայի Երկրաւոր փառաց և տեսանելի յաղթանակի մէջ, այլ հոգեոր թագաւորութեան մէջ, որ Հիմնուած է մահուամբ խաչի վերայ: Նրանց հարկաւոր էր զրկուիլ Նրանից, չտեսնել Նորա Երեսը, չսել Նորա ձայնն, որպէս զի աճէր նոցա հաւատն և յաղթող դառ-

նար։ Այսպէս ստնդեայ մանկան զրկում են մօր կաթից, որպէս զի նա աճի և զօրանայ։

Այժմ, եղբարք, մենք հասկանում ենք, թէ Ս. առաքեալն Պօղոս ինչ է կամենում ասել, յայտնելով, որ նա այլ ևս չգիտէ, չէ ճանաչում Քրիստոսին մարմնով։ Այս չէ նշանակում, որ նա ուրանում է Քրիստոսի մարդկային բնութիւնը, նորա ստորացումն և խաչի մահը, ընդհակառակն այս կնշանակէ, որ Յիսուսի մարդկութիւնը պէտք է տեսնուի հոգեոր աչքերով և ճանաչուի հաւատով։ որ առանց սորանա ներկայացնումէ, իրաւ է, մի զգալի տեսարան, բայց անպտուղ։

Որքա՞ն նշանաւոր խրատներ կարող էինք հանել այս մտքից։ Որքա՞ն բան կարող էինք ասել նոցա, որոնք մինչև ցայժմ ճանաչում են Քրիստոսին ըստ մարմնոյ։ Զուտ մարդկային կարեկցութեամբ խռովիլը Յիսուս Քրիստոսին յիշելիս և մինչև անդամ լալը նորա վերայ, իբրև վայրենի մոլեռանդութեան զոհի վերայ, յարիլը նորա պաշտաման անցուորական կողմին, միթէ սա չէ նշանակում նրան ըստ մարմնոյ ճանաչել։ Այսպէս չեն երկրպագում նրան նոքա, ոյք ճանաչել են նրան ըստ հոգւոյ։ Նորա ոտների տակ նոքա չեն լալիս այնքան նորա համար որքան իրանց համար։ Նորա մահուան մէջ խաչի վերայ նոքա տեսնում են ոչ միայն մարմնաւոր տանջանքներն, այլ ամենից առաջ նորա անվախճան խոնարհութիւնը, նորա անձառելի զոհը։ Մարդու Որդւոյ մէջ նոքա երկրպագում են մեզ համար զենուած Աստուծոյ Որդուն։ Եւ ով նրան այսպէս է ճանաչում, նա ապացուցանում է այս նրանով, որ նա տալիս է նրան իւր սիրոն և նրան նուիրում է բոլոր իւր կեանքը, նա չի աշխատիլ որոնել գտնել նրան, իբրև յայտնի պատմական մարտիրոսի, որ ապրել է 18 դար առաջ։ Նա կազմելով մեռած Քրիստոսի ճոխ գերեզմանը, չի աշխատել հեռացնելու իւր սրտից կենդանի Քրիստոսին, ոչ նա կաղօթէ նրան, իբրև յաւիտեանս յաւիտենից թագաւորող Փրկչին, այդպիսին կյարուի նորա գործին, կուրախանայ նորա յաղթանակին և կպատրաստուի նորա գալստեան համար։

Նոյն բնաբանի մէջ, եղբարք, բովանդակուում է և մի այլ աւելի բնդհանուր խրատ։ Ս. Պօղոսն ասում է, որ նա ոչ միայն Քրիստո-

սին, այլ և բոլոր մարդոց կամենում է այսուհետեւ ճանաչել ոչ  
մարմնով, այլ ըստ հոգւոյ, ահա Ա. առաքեալի այս միտքը, այս  
գաղափարը կցանկանայի դրօշմել ձեր հոգիների մէջ: Բայց մտա-  
բերենք կրկին այս խօսքերի իսկական միտքը, որպէս զի այս եղա-  
նակով կարողանանք ազատուել նշանաւոր, յաճախ մինչեւ անգամ  
մահաբեր տարակուսանքներից: Ա. առաքեալի այս խօսքերին այնպի-  
սի նշանակութիւն տուին, որ նոքա առաջ են բերում բոլորովին օրի-  
նաւոր առակութիւնք: Յաճախ պատահում էր, որ մարդիկ երեա-  
կայական կատարելագործման անուամբ ու պատճառաբանութեամբ  
խզում էին բոլոր մարմնաւոր և ազգակցական կապերը, հրաժա-  
րուում էին ընտանիքից և արհամարհում էին ամեն բնական հա-  
կամիտութիւնք և համակրութիւնք և թէպէտ նոցա պարտքն էր  
իրանց զառամեալ ծնողներին կերակրելը — նոքա բարձի թողի էին  
անում նրանց ասելով, «մենք այլ ևս ձեզ չենք ճանաչում»: Արդեօք  
այս է ուսուցանում մեզ Աւետարանը: Այս է արդեօք մեզնից պա-  
հանջում և Պօղոս առաքեալը <sup>(\*)</sup>):

Այդպիսի իրողութիւնք պատահում էին և Յիսուսի Քրիստոսի  
ժամանակ: Եինում էին այնպիսի զաւակներ, որոնք Աստուծոյ հա-  
ճոյ լինելու համար տալիս էին նրան այն, ինչ որ իրանց ծնողաց պի-  
տի տային: Այս տուրքն, ինչպէս պատմում է Ա. Մարկոս աւետա-  
րանից, կոչուում էր «կորբան» և ոչ ոք իրաւունք չուներ նրան  
ձեռնամուխ լինելու: Յիշեցէք, ինչ ասաց Յիսուս Քրիստոս այս մա-  
սին, ինչպէս նա այսպիսի վարմունքները կոչումէր Աստուծոյ պատ-  
ուիրանի իսախտումն: Այս մտքով Ա. Պօղոսն բացատրում է, թէ  
քրիստոնեան, որ իւր ծնողներին չէ պատուում և չէ հոգում նոցա  
վերայ, հեթանոսից էլ վատ է: Բայց ի՞նչ կնշանակէ չհոգալ ծնող-  
ների մասին: Այս կնշանակէ թէ ոչ միայն հարկ է նոցա ապրուստը

(\*) Ես այստեղ դիտաւորութիւն չունեի պահարակելու ամեն տեսակ  
կրօնաւորական կեանք, ես միայն կամենում էի ցոյց տալ: Թէ որքան երե-  
ւակայական, աւելորդապաշտական բան կայ մարդոց ոմանց արհամարհանքի  
մէջ դէպի ամեն բնական հակամիտութիւնքը:

հայթհայթել, այլ աւելի ևս նրանց իւր սէրը չմերժել. ահա ի՞նչ է Աւետարանի վարդապետութիւնը: Աւստի և ով աշխարհից (մարմ-նից) հրաժարուելու պատճառաբանութեամբ կրոնաբարէ կամ կը մոռանայ իւր բնական պարտականութիւնքն, այդպիսին ոչ միայն հակառակ ազգականութեան ձայնին է գործում, այլ և հակառակ Աստուծոյ հրամանին: Ուրեմն թող ձեզնից ոչ ոք յանուն Աւետարանի չարդարացնէ չարագործութիւնքն, որոնք իբրև թէ կատարում է անձնական ինքնակատարելագործութեան համար: Նրանց դատապարտել է Ս. Պօղոսն և ծաղրալի կլինէր պաշտպանել նրանց յենլով նորա հեղինակութեան վերայ:

Անտարակոյս իմ առաջ կարող են դնել Ս. Գրոց շատ տեղեր, ուր Յիսուս Քրիստոս անխնայ կերպով դատապարտում է նրանց, որոնք առաջ քան նրան կհետեւէին, խորհրդակցում են իրանց մարմնոյ և արեան ձայնի հետ: Ինձ կյիշեցնեն, «թող մեռելոց թաղել զմեռեալս իւրեանց» անդառնալի խօսքերը կամ դրանցից ել աւելի անսովորը. «Եթէ ով գալիս է ինձ մօտ և չէ ատում իւր հօրը, մօրը և կնոջ եւ զաւակներին, և եղբարց ու քոյրերին և մինչև իսկ իւր կեանքը, չէ կարող իմ աշակերտ լինել»: Բայց այս վերջին խրատներում խօսքը ինչու մասին է: Այստեղ խօսքը ընտրութեան մասին է պարտականութեան և սրտի յափշտակութեանց մէջ, Աստուծոյ և ընտանեկան կապերի մէջ: Եւ ահա հաւատացեալի համար այդպիսի ընտրութեան ելքը չէ կարող երկբայական լինել, երբ Տէրն ասումէ, պէտք է նրան հնազանդել և ոչ մի համակրութիւն, ոչ մի կապ, որքան էլ սա մեզ համար թանկագին լինէր և սուրբ, չպէտք է միջնորմ լինի Աստուծոյ և մեր հոգւոյ մէջ: Բայց որքան հեռու է սրանից այն վարդապետութիւնն, որ դատապարտում է ամեն անկեղծ զգայուն կեանք, ամեն կենսական զուարձութիւն և մեր մարմինը և քարոզում է քրիստոնեաներին իիստ հոգեպաշտութիւն, որ զուրկ լինէր բոլորովին կարեկցութեան զգացմունքից: Ակներև խոստովանում ենք՝ որ ոչ անկեղծ կեանքը, ոչ օրինաւոր կապերը և ոչ իսկ մեր մարմինը ինքն ըստ ինքեան չունին անսուրբ իրանց մէջ, ամեն ինչ, որ մարդկային է, կարող է Աստուծով սրբագործուիլ և նրան նուիրել:

Աւրեմն ի՞նչպէս պէտք է բացատրենք Ա. առաքելոյ «Այսուհետեւ մեք ոչ զոր գիտեմք մարմնով» խօսքերը: Նոցա միտք, եղբարք, շատ պարզ է: Եւրաքանչիւր մարդու մէջ երկու բնութիւն կայ — տես սանելի՝ արտաքին և անտեսանելի՝ ներքին: Մարմնոյ մարդը — դա տեսանելի մարդն է, հոգւոյ մարդը — դա անմահ հոգին է: Մարմնոյ տեսակէտից դու հարուստ ես կամ աղքատ, մատենագիր, պաշտօնեայ, վաճառական, մշակ, ծառայ, իսկ հոգւոյ տեսակէտից դու Աստուծոյ զաւակ ես: Ահա Պօղոս առաքեալը բացատրում է մեզ, որ նա այսուհետեւ կամենում է նայել մարդոց վերայ և ճանաչել նրանց հէնց այս վերջին հայեցակէտից՝ նոցա հոգեւոր անմահ բնութեան կողմից: Միայն Քրիստոնէական կրօնը հէնց կարող էր մեզ իւրաքանչիւր մարդու մէջ անմահ հոգի տեսանելու ուսուցանել: Եւ յիրաւի մինչեւ Յիսուս Քրիստոսի ժամանակ ի՞նչ նշանակութիւն ունէր աղքատը, ձկնորսը կամ մաքսաւորը: Բայց Յիսուսի Քրիստոսի հայեցակէտով վերջին մեղաւոր կնոջ հոգին էլ գթութեան — ողորմութեան կշռքում տեղ ունի, հաւասար Կեսարի հոգւոյն. Յիսուսի հայեցակէտով բոլոր մարմնաւոր մեծութիւնը — ոչինչ է. նա մինչեւ իսկ չի էլ յիշում նորա մասին. բայց երբ Մարիամը թափում է նարդեան իւղը նորա ոտների վերայ ի նշան զղջման և ապաշխարանաց, նա ասում է, որ այս վարմունքը կյիշատակուի մինչեւ աշխարհիս վերջը: Ի՞նչ նշանակութիւն ունին Յիսուսի Քրիստոսի համար այս աշխարհիս բոլոր արհեստական տարբերութիւնը: Նա ամենուրեք տեսնում է մեղաւորներ, որոնք կարօտ են փրկութեան, ամենքի հետ միևնոյն լեզուով է խօսում՝ ամենքին իւր սէրն է պարզեռում, ոչ ոք նրան անարժան չէ թուռում նորա ուշագրռութեան և յաճախ ըստ աշխարհի ամենից ստոր դիբք ունեցողներին տալիս է նա իր ընտիր խրատները:

Ահա Յիսուս Քրիստոսից սովորեց Ա. Պօղոսը դատել մարդոց ոչ ըստ արտաքին երեսյթին. Նրանից սովորեց Փեստոսների և Ագրիպպասների մէջ միայն կորած հոգիք տեսնելն, որոնց քարոզում է փրկութեան խօսքերը, առանց հոգալու և ուշք դարձնելու նոցա իշխանական գաւազանի և թագի վերայ: Նա Յիսուս Քրիստոսից սովորեց քարոզելու Աւետարանը Ակիւղասին և Լիդիասին նոյն սի-

բով ու եռանդով, ինչպէս և Սերգիոս փոխ հիւստոսին ու Պուրլիս կառավարչին, Յիսուս Քրիստոսից նաև սովորեց Հասկանալու, որ այլ ես չկայ ոչ Հեղեն, ոչ Հրեայ, ոչ ստրուկ և ոչ ազատ», որովհետեւ Աստուծոյ առաջ ամենքն էլ Հաւասար են:

Եղբարք, այսպէս էլ պէտք է ճանաչել մարդոց՝ այսպէս էլ պէտք է նրանց սիրել: Աշխարհս ճանաչում է և ընդունում որոշեալ տարբերութիւնքը դիրքի, կրթութեան և կարողութեան: Ինքն ըստ ինքեան Հասկանալի է, որ ես չեմ ցանկանում նրանց ջնջել, որովհետեւ նոքա անհրաժեշտ են. եթէ դուք նրանց այսօր ջնջէք, նոքա վաղը կրկին Հանդէս կդան, որովհետեւ կախուած են մեր Հասարակութեան նոյն իսկ հիմնական պայմաններից: Յարգենք նրանց և իրեւ թէ յանուն քրիստոնէական վարդապետութեան աշխարհիկ բարձր դիրք ունեցողների վերաբերութեամբ ի գործ չդնենք ամեն ինչ հարթող մակերևոյթն, որ, յայտնի բան է, ոչ ոք չի կամենալ ստորացնել իւր Հասարակական դիրքից էլ ներքեւ: Բայց ընդ սմին յանուն Աստուծոյ աշխատենք ճանաչելու մարդոց հոգւով և ոչ մարմնով: Ըստ կարծեացս չկայ այն Հայեցակետից աւելի վատ բան, որով աշխարհիկ անձինք ոմանք նայում են մարդկութեան վերայ. ըստ նոցա մարդիկ ոչ այլ ինչ են բայց եթէ պարզ ծանուցատախտակներ, որոնք արտայայտիչք են այս ինչ տիտղոսի, դիրքի կամ կարողութեան: Ուստի և վերջինների վերաբերութեամբ նոքա ունին պայմանական լեզու, որ վերաբերում է միշտ միայն մարդուս արտաքին տեսանելի բնութեան: Արտաքոյ Հասարակական կեանքի, արտաքոյ բարձր դիրք ունեցողի յարաբերութեան ստորագաս անձանց հետ, արտաքոյ յարաբերութեան տիրոջ ծառայի հետ, վաճառականի իւր յաճախորդների հետ—այդ մարդիկ ոչինչ չգիտենքացաց մէջ ամեն ինչ արհեստական է—բովանդակութիւնն և ձեւը, կրօնն ու բարոյականութիւնը. նոցա մէջ ամեն ինչ դատարկ է, նեխուած ու կեղծ: Այդպիսի կոշտացած և վչացած մարդու գլուխը երբէք չէ լուսաւորուած որպէս զի այս կամ այն Հասարակական ծածկոցի տակ տեսնէր հոգի կենդանի. նորա խօսքն երբէք չէ թափանցում այն մարդու սիրտն, որոյ հետ Հանդիպում է կեանքի մէջ, երբէք չէ շարժում մարդու սրտի ոչ մի լարը, ազդմամբ այն խորին

զգացմանց, որոնք պահուած են մարդկային հոգւոյ ամենածածուկ գաղտնեաց մէջ: Այսպէս է մեր հարիւրաւոր մերձաւորների կեանքը:

Ո՞չ. ինչպէս դիւրալի է ինձ, երբ ես դուրս եմ գալիս այդ արհեստական և մեղսալից մթնոլորտից, որպէս զի Աւետարանի կենդանարար շունչը շնչեմ: Այստեղ ես ինձ նմանի մէջ ամենից առաջ տեսնում եմ մարդուն և մինչև իսկ աւելի—կենդանի հոգի, իմ հոգւոյ նմանը: Տուէք ինձ ամենատգէտ, ամենակոպիտ մարդուն, մէկին նրանցից, որոնց վերայ աշխարհիկ անձինք ուշադրութիւն էլ չէին դարձնիլ և եթէ նրան տեսնելիս կյիշեմ Քրիստոսին, իսկոյն ճանաչում եմ այդ մարդու մէջ իմ եղբօրս ըստ հոգւոյ, որ իսկապէս և կազմում է նորա էռութեան իսկական և անխորտակելի կողմը: Ի՞նչպէս կարող էի ես նրան զլանալ եմ յարգանքս:

Որքան մեծութիւն կերեսէր կեանքի մէջ, եթէ մենք գիտենայինք մարդկութեան վերայ նայելու այնպէս, ինչպէս նայում էր Յիսուս Քրիստոս, եթէ մենք գիտենայինք ճանաչելու մարդոց ոչ ըստ արտաքին երեսյթին այլ ըստ ներքին բնութեան նորա: Որքան գիտերը արած կլինէինք մենք մարդոց հոգւոց մէջ, որոնք մեզ յաճախ ամենապերախտ և կոշտ են թուում: Յիսուս շօշափում, շարժում էր մարդուս անմահ հոգին, նա որոնեց և գտաւ նրան նոյն իսկ ամենակոպիտ և կեղոտու կեանքի մէջ և հոգին պատասխանում էր նորա կոչին, որովհետեւ Յիսուսի ձայնն ունէր սիրոյ դիւթիչ գաղտնի զօրութիւն: Հասարակ հետախուզիչը կամ մինչև իսկ խորին փիլիսոփան ի՞նչ կարող էր տեսնել Գալիլիայի այն փոքրիկ անկիւնում, ուր Յիսուս սկսաւ իւր ծառայութեան գործը: Նա կտեսնէր արդար բայց տգէտ բնակիչներ և աւելի ոչինչ, որովհետեւ նա միայն ըստ մարմնոյ կդատէր: Իսկ Յիսուս այնտեղից հանեց, հանդէս բերեց մարդկութեան ամենընտիր մեծ ներկայացուցիչներին, որպիսիք միայն տեսած է աշխարհս—այն է Պետրոսին, Մարիամին, Յովհաննիսին: Ինչո՞ւ: Որովհետեւ նա տեսաւ նոցա հոգին, որովհետեւ նա սիրեց նրանց: Հետեւնք ուրեմն նորա օրինակին, եղբարք, ասենք Ա. առաքեալի հետ միասին, որ այստեղետեւ կձգտենք գիտենալու մարդոց հոգւով, այսինքն ըստ յաւիտենական գոյութեան նոցա:

Այս գաղափարի համեմատ, որքան հնար է, զեկավարուեցէք ձեր համակրութեանց ու բոլոր յարաբերութեանց մէջ մարդոց հետ: Դուք - քըիստոնեայ էք. մի սիրէք ոչոքին, առանց ընդ նմին սիրելու նորա հոգին, մի նուիրէք ձեր սիրտն անցաւողին — տեսանելի աշխարհից բարձրացէք իրականութեան աշխարհն և վարժեցէք ձեր հայեացքը տեսնելու իւրաքանչիւր մարդու մէջ այն, ինչոր նորա մէջ կտեսնէը Տէրը: Այն ժամանակ ձեր մէջ բուն չի դնիլ ոչ ստորագարշ մարդահաճութիւնը նոցա վերաբերութեամբ, որոնք ձեզանից բարձր են, և ոչ էլ աւելի ևս այն զզուելի արհամարհանքը դէպի ձեզանից ստորադասներն. այն ժամանակ, ըստ Պետրոս առաքելոյ խօսքերին, դուք կյարդէք ամեն մարդոց, որովհետեւ նոցանից իւրաքանչիւրի մէջ դուք կտեսնէք հոգի—այսինքն կենդանի Աստուծոյ սրբութիւնը, կանգուն կամ աւերած սրբարան, բայց և այնպէս սրբարան, առ որ ձեզ անհնար է առանց յարդանքի մեր ձենալ:

Եղբարք, ամեն ինչ, որ մարմնաւոր է, անցնում է, ջնջուռում է, ոչնչանում է. Ամեն ինչ մեզ աղաղակում ասում է — յի՞ նուիրեք ձեր սիրտն անցաւորն երեսյթին: Ով Տէր, առ ի՞նչ կծառայէ մեզ վերջին օրը բոլոր երկրաւոր, մարմնաւոր մեծութիւնը — գովասանք՝ ները, հաւանութիւնքը, մարդելուզութեան խունկը — երբ Տէրը կը-դատէ և կհատուցանէ իւրաքանչիւրին ըստ հոգւոյ: Քանի՞ քանի ըստ մարմնոյ աշխարհումն յարգելիներին նա կատէ. Հեռացէք ինձանից, ես ձեզ չեմ ճանաչում: Ընդհակառակն քանի՞ քանի՞ ըստ մարմնոյ արհամարհածներին նա կատէ. «Մտէք իմ ուրախութեան մէջ: Գնահատենք ուրեմն, եղբարք, ամեն ինչ աշխարհումն ահեղ դատաստանի օրուայ սուրբ և զարհուրելի գնահատութեամբ, ու լովինեամեն նրանից ոչոք է կարող փախսել: Այէն: